Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-755-06.10.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«2. Սոցիալական փաթեթի շրջանակներում հատկացվող գումարները կարող են փոխանցվել նաեւ այն հիմնադրամներին, որոնց գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության կայուն ու համաչափ զարգացում ապահովվող ծրագրերի իրականացմանը, տնտեսության կայունացման օժանդակմանը կամ այլ համապետական ծրագրերի իրականացմանը: Հիմնադրամներին համապատասխան փոխանցումն իրականացվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կառավարության որոշմամբ համապատասխան հիմնադրամը նախատեսված լինելու դեպքում և կարգով:

Հոդված 2. Անցումային դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես և գործում է մինչև 2021 թվականի հոկտեմբերի 7-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երկրորդ ընթերցում

Կ-755-06.10.2020-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«2. Սոցիալական փաթեթի շրջանակներում հատկացվող գումարները ~~պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց հայեցողությամբ~~ կարող են փոխանցվել նաեւ այն հիմնադրամներին, որոնց գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության կայուն ու համաչափ զարգացում ապահովվող ծրագրերի իրականացմանը, տնտեսության կայունացման օժանդակմանը կամ այլ համապետական ծրագրերի իրականացմանը: Հիմնադրամներին համապատասխան փոխանցումն իրականացվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կառավարության որոշմամբ համապատասխան հիմնադրամը նախատեսված լինելու դեպքում և կարգով:

Հոդված 2. Անցումային դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես և գործում է մինչև 2021 թվականի հոկտեմբերի 7-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> օրենքում լրացում կատարելու մասին նախագծի (*Կ-755-06.10.2020-ԱՍ-011/0*) երկրորդ ընթերցմամբ քննարկման համար ներկայացված բանավոր առաջարկների

Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Նարեկ Զեյնալյան	<<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> օրենքում լրացում կատարելու մասին նախագծի (Կ-*755-06.10.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում եմ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 26-րդ հոդվածի 2-րդ մասից հանել <<պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց հայեցողությամբ>> բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> օրենքում լրացում կատարելու մասին նախագծի (*Կ-755-06.10.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում եմ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 26-րդ հոդվածի 2-րդ մասի <<դեպքում>> բառից հետո լրացնել <<և կարգով>> բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> օրենքում լրացում կատարելու մասին նախագծի (*Կ-755-06.10.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում եմ նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Հոդված 2. Անցումային դրույթներ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես և գործում է մինչև 2021 թվականի հոկտեմբերի 7-ը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**